ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<29> դեկտեմբերի 2021 թվականի N 52 – Ն

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով, 11-րդ հոդվածի 2-րդ մասով, 13-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասով, համայնքի Նոր Հաճընն ավագանին ***որոշում է.***

1.Նոր Հաճընն համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար սահմանել տեղական վճարների միասնական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Նոր Հաճընն համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 18-ի <<Նոր Հաճն համայնքի վարչական տարածքում տեղական վճարների 2021 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին>> N 57–Ն որոշումը:

3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել տեղական վճարների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև համայնքի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումը համայնքի պաշտոնական համացանցային municipality.hachn.am կայքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՏԱՐՈՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՕԶՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված 1

Նոր Հաճըն համայնքի ավագանու
< 29 > դեկտեմբերի 2021 թվականի N 52 - Ն որոշման

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ԸՍՏ ԽՄԲԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղական վճարների տեսակները	Օրենքով սահմանված դրույքաչափը	Առաջարկվող դրույքաչափը
1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար		**10000**
2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.		**10000**
3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.		**10000**
4) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝		**1000**
5) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.		**50000**
6) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.		**10000**
7) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մինչև հազար դրամ փոխհատուցման վճար.		**1000**

8) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.		**7000**
9) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.		«Նոր Հաճընի համայնքապետարանի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ (Դաշնամուր- 4000 Լարային- 2000 Վոկալ-2000 Գեղարվեստ-2000 ժող գործիքներ - անվաճար «Նոր Գեղիի արվեստի դպրոց » ՀՈԱԿ (Դաշնամուր- 5000 Լարային- 2000 Վոկալ<<ժող երգ>>-5000 Գեղարվեստ-5000 Ակորդեոն, կիթառ, ջութակ - 5000, պարարվեստ - 5000, ժող գործիքներ – անվաճար «Քանաքեռավանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի Բաժինների համար ՝ 5000 դրամ

10) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.		**30000**
11) Աղբահանության վճար		
1) ֆիզիկական անձանց համար /փաստացի բնակվող/՝ 1 շնչի համար	**0-400**	**200**
2) իրավաբանական անձանց համար՝ 1 խմ-ի համար կամ 1 քմ համար -Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ -հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ -արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ -կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ.	**0-3000**	**2000** **70** **30** **8** **4**
3) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի	**0-10000**	մեկ խորանարդ մետր աղբի համար **3 000** (երեք հազար) դրամ, ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ **10 000** (տաս հազար) դրամ
12)համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝		
ա) կենդանիների հիվանդությունների բուժման կանխարգելման հարցերով խորհրդառվություն.		300
բ) վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյուառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից.		200
գ) կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար.		1000
13) համայնքի վարչական տարածքում հենասյունների վարձակալության վճար յուրաքանչյուր ամսվա համար.		300

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**